

ԿԱՐՄԻՐ ԿԱՊՈՑԸ

Բեռլինից Բրիւսել ենք գնում:

Երեկոյեան 9 ժ. 50 ր. գնացքն ամբողջապէս լիքն է ճանապարհորդներով: Իւրաքանչիւր նստարանի վրայ անխուսափելի չորս հոգին կայ: Շարժուելու տեղ չը կայ: Դիմացի նստարանն ամբողջապէս բռնուած է, կարծես, դիտմամբ մրցանակի համար ընտրած գերմանական հասակեկ մարմիններով: Մեր նստարանը, համեմատաբար, աւելի բաղդաւոր է. այնքան էլ չի ճնշուում ծանրութեան տակ. մէջ ու մէջ է միայն գիրուկ՝ մարմին:

Մի տեղ կայ միայն չբռնուած, այն էլ ինձ է վիճակուում բռնել: Գնացքը շարժուում է:

Նայում ենք իրար երեսի: Ամենքն ևս գոգոհ են, որ այդքան բազմաթիւ է ճանապարհորդների թիւը: Իւրաքանչիւրի դէմքին կարելի է կարգաւ,— երբ պիտի տեղս մի բիչ լայնանայ:

Գիշերը կամաց-կամաց քչացաւ ընկերակիցներիս թիւը, իսկ առաւօտեան դէմ իւրաքանչիւր անկիւնում մի—մի հոգի էինք մնացել:

Քեօնում մեր կուպէն բոլորովին դատարկուեցաւ: Միակը ճանապարհորդը ես էի: Ուստի ամենայն սառնասրտութեամբ ոտքերս մեկնեցի իմ տրամադրութեան տակ մնացած նստարանի վրայ, սպասելով գնացքի շարժուելուն: Մնացել էր երկու բոպէ միայն:

Անցաւ մի բոպէ էլ: Յոյս ունէի, որ այլ ևս ոչ ոք չի մտնի և մեն-մենակ կմնամ խոհերիս հետ:

Յանկարծ մեր բաժնի դուռը բացուեցաւ և կաշուէ

պայուսակը մի կռնատակին, ձեռքին էլ մի փղբրիկ կողով բռնած, որի մէջ հանգիստ բազմած էր իւր «սիրելի ֆիտօն», իսկ միւս կռնատակին անխուսափելի հովանոցը, ներս մտաւ, աւելի շուտ, իրեն ներս ձգեց, մի երկարհասակ անդլուհի Դէմքի վրայից ուրախութեան ժպիտ անցաւ, այնչափ որչափ անդլուհին կարող է ցոյց տալ։ Ուրախ աչքերը զննեցին դատարկ նստարանը և օրիորդը տեղաւորուեց մի անկիւնում։ Եւ արդէն ուրախութեան երկրորդ ժպիտն էր խաղում նորա դէմքի վրայ, որ իւր «պուպունիկի» հետ կարող է մի ամբողջ նստարան բռնել, երբ վերջին վայրկեանին, մէկը դուռը բաց արեց և մեր բաժինը մտաւ։

Անկիւնում տեղաւորած պայուսակից կախած այցեւորմանը ասում էր, որ օրիորդը ոչ միայն անդլուհի է, այլ և կոչւում է «Miss Millie Guant-Tolput», մի անուն, որ կարծես դիտմամբ էր գտած։

Միսս Միլլին, ոչ միայն մի բնազդական տեղուծիւն էր զգում դէպի մարդկային սեռի տգեղ ներկայացուցիչները, այլ և մի տեսակ դժկամակութիւն, որով նոցանից և ոչ մէկը չէր արժանացել միսս Միլլիի շնորհներին։ Իւր չորս-տասը տարին զարկելուց յետոյ, միսս Միլլին վճռական կերպով որոշել էր ընդ միշտ ամուրի մնալ, այն էլ ամենայամառ և խիստ ամուրի։ Եւ պէտք է ասել, որ այն ըռպէից, երբ այդ չարաբաստիկ չորս-տասը տարին զարկել էր, այդ ըռպէից բաւական պատկառելի ժամանակամիջոց էր անցել։ Կեանքն անցել էր արդէն պահանջ դարձած կանոնաւորութեամբ, որ խնամութեամբ ու լրիւ ամեն օր կրկնում էր։ Միակ ընկերը ծիդօն էր, իւր անդին ֆիդօն, դէպի որը միսս Միլլին անսահման քնքշանք էր տածում։ Եւ եթէ ամեն տարի ձմեռն անցնում էր Տիրօլի գեղեցիկ և պատասպարուած հովիտներից մէկում և հէնց ամեն տարի էլ այս ժամանակը թողնում էր Տիրօլն ու հեռանում Անգլիա, պատճառն այն էր, որ Տիրօլի օդը պակաս առողջարար աղդեցութիւն չէր թողնում միսս Միլլիի շան վրայ, ինչ-

պէս և ոչ պակաս բարերար հետքեր էր թողնում միսս Միլլիի վրայ:

Հէնց որ տեսաւ օտարականի հապճեպով գնացքն ընկնելը, միսս Միլլին մի անհանգիստ շարժում արեց, ձեռքը պայուսակին տարաւ, որ առնէր, դուրս գար մի ուրիշ կուպէ գտնէր, բայց հէնց նոյն րոպէին էլ գնացքը շարժուեցաւ: Կամայ-ակամայ ստիպուեցաւ այդ անտանելի ընկերութիւնը տանել, քաշուեցաւ բոլորովին, կծկուեցաւ, իւր ֆիզօն կրծքին սղմած:

Միսս Միլլին ակնոցներէ վրայից կողմնակի, գողունի հայեացք ձգեց մեր նոր ընկերակցի վրայ, որի արտաքինը օտարոտի էր, իսկ դէմքն անհանգստութիւն, երկիւղ ազդող շեշտեր ունէր: Երեսը թթուած, միրուքը սև, մազերը խճճուած: Ձեռքին մի ճամբրուկ ունէր, կռնատակին հովանոց, իսկ ձախ ձեռքին բռնած էր ինչ որ կլոր բան, փաթաթած կարմիր թաշկինակի մէջ: Բըռնելու ձևն արդէն ապում էր, որ սովորական կապոցներէ չէր այդ բանը: Անպատճառ կասկածելի բան կար մէջը փաթտած: Սյդ բանը ամենայն հեշտութեամբ կարելի էր կռահել այն անվերջ հոգատար շարժումներից և հազարաւոր զգուշաւոր խնամքից, որ կարմիր ծրարի տէրը ցոյց էր տալիս:

Նորեկը մի անհանգիստ շարժում ձգեց երկու նըստարանի վրայ, անշուշտ այն որոշումով, թէ որի վրայ տեղաւորուի: Նորա արտաքինը, շարժումները իմ ուշադրութիւնն էլ էին գրաւել: Բայց կատարեալ արեւելցու անհոգութեամբ մեկնած ոտքերն շարժելու ամենեկին ոչ մի նշան չէի ցոյց տալիս: Կէս-խուփ կոպերի միջով հանգիստ դիտում էի միսս Միլլիի հետզհետէ աւելացող հոգեկան անհանգստութիւնը և նորեկի շփոթութիւնը: սպասելով թէ ինչով պիտի վերջանայ:

Տեսնելով, որ ինձնից շարժուող չի լինի, նորեկը շտապեց ձեռքի ճամբրուկը տեղաւորել դիմացի փոքրիկ սեղանի վրայ, հովանոցն էլ տեղաւորեց ճամբրուկի կողքին, իսկ ինչ վերաբերում է միւս ձեռքին բռնած կար-

միւր կապոցին,—այդտեղ բանը դժուարացաւ, աչքը ձգեց ցանցապատին, բարձրացաւ նստարանի վրայ, դրեց ցանցապատի մէջ, իջաւ, նորից բարձրացաւ, շօշափեց, նորից իջաւ, մէկ էլ բարձրացաւ և իջեցրեց։ Ծամբրուկը քիչ բաշեց, կողքին տեղաւորեց, բայց այդ էլ դուր չեկաւ, —նորից ձեռքն առաւ Վերջապէս տեղաւորեց կողքի փոքրիկ փափուկ բարձի վրայ, ինքն էլ ամենայն զգուշութեամբ մօտը նստեց և աչքը շարունակ վրան ձգած, մի վայրկեան չէր հեռացնում։

Բաւական չէր, որ աչքը չէր հեռացնում, այլ մի փոքր-յետոյ էլ սկսեց ինքն իրեն կամաց-կամաց խօսել, որից երբեմնակի խօսքեր կարելի էր ջոկել միայն, — «իմ փոքրիկ անդին գանձա»... կամ «վերջապէս հասաւ ցանկալի օրը»... կամ «սպասիր, թագաւորին կասեմ ասելիքս»...

Միսս Միլլին աւելի ևս անհանգստութեան նշաններ էր ցոյց տալիս,—անշուշտ խենթ է, մտածում էր նա։ Ի՞նչ է ուզում ասել, թէ «թագաւորին կասեմ ասելիքս»։ Վերջապէս ինչ «անդին գանձ» էր պարունակում այդ կարմիր թաշկինակը։

Մի քիչ անց, մարդը՝ ամբողջ ժամանակը յուզուած և այլայլուած, գրպանից մի սիգար հանեց և սկսեց ծխելու պատրաստութիւն տեսնել։

Եթե մի կնոջ ներկայութեամբ, այն էլ առանց իրաւունք խնդրելու, դա, գիտէք, աններելի յանցանք է, որ միսս Միլլին ներել չի կարող։ Բայց այդ դեռ ևս ոչ չինչ։ Մարդկային անքաղաքավարութիւնը սահման չունի։ Բայց ծխել ֆիզոյի մօտ... Որովհետև ֆիզօն ծխախոտի հոտ տանել չէր կարող,—անվերջ փռնդտոց էր պատճառում։ Իսկ դա կարող էր հիւանդութեան տանել։ Ահա ուր կարող էր հասնել մարդկային քարսրտութիւնը։ Բայց աւելի զօրեղ պատճառ կար։ Ֆիզօն նոր էր նախաճաշել, իսկ անվերջ փռնդտոցը կարող էր... ստամոքսի խանգարում պատճառել միսս Միլլիի ծնկներէ վրայ բազմած ժամանակ։

Միսս Միլլին վրդովուած շարժում արեց իւր անկիւնից։

«Պարոն, պսռաց նա, ծխողների բաժնի մէջ չէք»։

Մարդը յանկարծակիի եկաւ. իսկոյն շուտ եկաւ դէպի նա, և յանցանքը տեղն ու տեղը բռնածի պէս, շփոթուած հայեացք նետելով միսս Միլլիի վրայ, այլալուծած ձայնով ու շարժումներով քաջատրեց կակաղելով. «Ներեցէք... պատճառը... կարծում էի... մենակ եմ»։

Պարզ էր, որ մարդը չափազանց ցաւում էր, որ մենակ չէ։ Անշուշտ մի զօրեղ պատճառ ունէր, որ ստիպում էր նորան մենակ լինել, որպէս զի օտար հայեացք չքննէր իւր շարժումները, արարքը։ Ոչ մի կասկած չկար։

Անծանօթը մեղաւորի շարժումով ծխախոտը նորից դրպանը դրեց, միսս Միլլին նորից իւր անկիւնը քաշուեցաւ, չոր շրթունքները պինդ հուպ տուեց, բարկութիւնից իջած դլխարկն ու քօղը անհանգիստ շարժումով ուղղեց, Ֆիդօյին հոգատարութեամբ կրկին տեղաւորեց իւր կողովի մէջ և ինկվիդիտօրի դիրք բռնելով, անթարթ հայեացքն այլ ևս չպոկեց իւր հարեանից։ Ամենափոքր շարժում, դիմագծերի չնչին փոփոխութիւն չէր խուսափում նորա ոստիկանական հայեացքից։

Ոչ մի պայմանով չէի կամենայ անծանօթի տեղը լինել։

Գերմանական սահմանագծի Herbestal կայարանից մինչև Բելգիական սահմանագծի Welkenraedt կայարանը միայն մի քանի րոպէ էր։ Հասանք սահման։ Գնացքը կանգնեց։ Պէտք է իրեղէնները քննէին։ Երբ մաքսատան աստիճանաւորները մեր բաժինը մտան մեր իրեղէնները նայելու, միսս Միլլիի կրծքից մի խոր հառաչ ելաւ. կարծես վրայից մի ահագին ծանրութիւն էր ընկել, — մարդը չկար, չքացել էր։

Է՛, չկար, չկար։ Խնշնշանակութիւն ունէր մի պատահական ճանապարհորդակից։

Գնացքը փոքր էր։ Իրեղէնները նայեցին շուտով և

առանց երկար, հոգեմաշ ձեականութեան, ինչպէս միւս
սահմանադրերի վրայ: Նոյն իսկ չհարցըին էլ, ան-
ցադիր ունէք՝ թէ ոչ: Բաւականանում էին միայն հարց-
ներով «ոչինչ չունէք»: Եւ երբ «ոչինչ» էր հետեւում, անց-
նում էին, մտքով իսկ չանցնելով, թէ կարող էին խա-
բել: Խօսքի ազնուութիւնը թանգ է գնահատւում:

Արդէն գնացքը շարժւում էր: Մտնում էինք Բել-
գիա: Մէկը վաղէ-վաղ, արագ բաց արեց դուռը, հեա-
լով թուաւ գնացքի աստիճանի վրայ և գլխապատառ
մեր բաժինն ընկաւ:

Դաժան դէմքով, խճճուած մազերով մարդն էր.
կարմիր կապոցը կրկին պինդ-պինդ կրծքին սեղմած,
մոլորած կանգնել էր, կարծես առաջուանից աւելի ևս
վրդովուած: Ի՛նչ էր պատահել: Բացատրութիւնը շատ
պարզ էր միսս Միլլիի համար: Անշուշտ այդ կապոցի
մէջ մադսանենդ ապրանք կար: Աստիճանաւորների գա-
լու ժամանակ մարդուկը ծկուել էր, իսկ այժմ,—երբ
ամեն ինչ վերջացել էր, նորից երևում է: Անշուշտ այդ
մարդը վերին աստիճանի վտանգաւոր մարդ էր, վճռեց
իւր մոքումը միսս Միլլին:

Քանի գնում, այնքան աւելանում էր միսս Միլլիի
կասկածը, հետն էլ անհանգստութիւնը:

Ինչպէս ասացի միսս Միլլին արդարացնում էր իւր
անունը *), բայց այս նոր անհանգստութիւնը, կարծես,
րոպէ առ րոպէ աւելի էր աւելացնում նորա անտանելի
նիհարութիւնը:

Մի նոր հանգամանք աւելի ևս աւելացրեց նորա
անհանգստութիւնը:

Պառաւ օրիորդը նկատեց, որ իւրաքանչիւր կայա-
րանում անթիւ ոստիկաններ, զինայրեր (gendarmes) գծի
երկու կողմը կանգնած խիստ հսկողութիւն էին պահ-
պանում և մէկ-մէկ քննում էին գնացքը բարձրացող

*) Guant անգլիերէն նշանակում է բարձրահասակ, չոր
չոր, վերին աստիճանի նիհար մարդ:

ուղևորներին: Եթէ այդ բանը մի կայարանում միայն պատահէր, անշուշտ պատահականութեամբ կըացատրէր և կանցնէր. բայց մի քանի կայարան շարունակ այդպէս անցանք և գուցէ դեռ շատ պիտի անցնէինք այդպէս: Մի հանգամանք, որ խուսափել չէր կարող միսս Միլլիի բացատրութիւնից: Նորա կասկածները՝ հաւանականութիւն ստացան: Բայց առաջ քան դրականապէս արտայայտէր, վճռեց ստուգել իւր կասկածները: Եւ երբ կայարանի առաջն անցնում էր մեր կողպէի առաջից, նա հարցրեց այդ արտակարգ հսկողութեան և զննութեան պատճառը:

— Պատճառն այն է, տիկին, որ...

Միսս Միլլին ոտքից գլուխ ցնցուեցաւ: Ի՞նչպէս թէ՛ տիկին...

— Ներեցէք, պարոն, ես տիկին չեմ, օրիորդ եմ:

— Հազար ներողութիւն: Պատճառն այն է, օրիորդ, որ անիշխանականների փորձի զօրեղ կասկած կայ: Թագաւորը այսօր պէտք է անցնէ Սպա երթալու և ոստիկանութիւնը հսկում է, որ նորա կեանքի դէմ փորձ չլինի:

Կայարանի աւագը հեռացաւ: Իսկոյն մի սարսափելի կասկած անցաւ միսս Միլլիի մտքով:

— Պարոն, գոռաց պառաւ օրիորդը՝ հեռացող աստիճանաւորի յետեից, մի այնպիսի արտակարգ յուզմամբ, որ կարծես այդ բոպէին մէկը իւր կեանքի դէմ փորձ արեց: Բայց աստիճանաւորը չլսեց նորա ձայնը և զնացքը շարժուեցաւ:

Միսս Միլլին յուսահատ վայր ընկաւ մի ծանր քարի պէս իւր անկիւնը: Նորա երեսին գոյն չկար. սպրտնել՝ սպիտակ պատ էր կտրել: Մի ակնթարթ բաւական էր նորա համար, որ գլխի ընկնէր, թէ բանն ինչու՞ն է: Այդ օտարօտի հագուստով, կասկածելի շարժումներով, կարճիկ մարդուկը, որ շարունակ միայնութիւն էր օրոնում, որ թաքնուում էր մաքսատան աստիճանաւորներից... անիշխանական է:

Եւ այդ իրը, որ նա այնքան հոգատարութեամբ տանում էր, որից աչք չէր հեռացնում և շարունակ շօշափում էր, ստուգելու համար, թէ չի չբացել իւր անգին գանձը, որ թագաւորին պիտի լաւէր իւր ասելիքը... մի ուումը է:

Այս, արևի լոյսի պէս պարզ է այդ նոյնքան ճիշտ, որչափ ինքը միսս Միլլին է: Եւ ինքը՝ միսս Միլլին նոյն բաժնի մէջ մի ուղեկից ունէր, որ ձեռքիս մի ուումը էր տանում թագաւորի կեանքի դէմ մի անիրաւ, չսուած, անհանդուրժելի փորձ անելու:

Եւ ինքը՝ միսս Միլլին ակամայ մասնակից է այդ չարագործութեան, որովհետեւ գիտէ:

Ի՞նչ անէր:

Ջրաչէր արդեօք գնացքի ազդանշան դանգակի թելը և գնացքը կանգնեցնել տար:

Միսս Միլլին հոգեկան այնպիսի վիճակի մէջ էր, երբ ամենահասարակ իրերը և երևոյթները դադարում են սովորական, հասարակ իր լինելուց և երևոյթները գերբնական կերպարանք են ստանում և ճահճի մէջ ընկղմուողի նման, որքան առաջ են գնում, այնքան աւելի են խորասուզւում:

Եւ միսս Միլլին գլուխ էր ճաքեցնում, թէ ինչ անէր, ինչպէս այդ չարագործութեան առաջն առնէր:

Իսկ գնացքը առաջ էր թռչում շարունակ:

Յանկարծ, բոլորովին պատահաբար, միսս Միլլին նկատեց, որ անիշխանականը ընով է անցել և իւր կարմիր փաթտոցն էլ կողքին դրել, նախախնամութեան մատն էր... Ֆիդօն էլ էր ընով անցել և խռովում էր, որչափ ոյժ ունէր, հանդիստ պառկած իւր կողովի մէջ, ամենեւին տեղեկութիւն չունենալով, թէ ինչ էր կատարում իւր տիրուհու սրտում: Միսս Միլլին գրկեց զգուշութեամբ իւր շնիկը, համբուրեց, մտքով «միասբարե» ասաց իւր սիրելիին և դրեց նստարանի միւս կողմը: Յետոյ ժողովելով իւր բոլոր ոյժը, որչափ կարող էր ունենալ միսս Միլլիի մարմինը, կամաց-կամաց սլուե-

լով մօտեցաւ անիշխանականին և կռացաւ կարմիր թաշկինակի մէջ փաթաթած կլոր բանին: Միսս Միլլին զարհուրած յետ քաշուեցաւ: Այժմ վերջնականապէս համոզուեցաւ, որ այդ կլոր փաթտոցը կատարեալ ուռմբ էր — դժոխային մի մեքենայ: Փաթտոցի միջից կամացուկ չիկ-չուկ էր լսել: Անշուշտ գնացքի ցնցումներից մեքենայի անիւները սկսել էին բանել և որտեղ որ էր, հիմք պայթում կառաջանար: Վայրկեան կորցնել չէր կարելի, պէտք էր դործել:

Միսս Միլլին յանկարծական մի շարժումով վրայ պրծաւ և յափշտակեց զարհուրելի մեքենան: Միակ բաց լուսամուտը, որ միսս Միլլին դեռ բաց էր թողել, բռնազդմամբ, երբ գլուխը հանել աստիճանաւորի յետևից պոռում էր, — դիմացիներն էր: Նորան այնպէս թուաց, թէ դարեր անցան մինչև որ այդ լուսամուտի առաջ հասաւ անցնելով ամբողջ բաժնի երկարութիւն կազմող երեք-չորս քայլը:

Այդ րոպէին գնացքն անցնում էր մի փոքրիկ լեռնային գետակի երկարութեամբ, որ տարափ անձրևի ջրերի յորդանալով եղերքներից դուրս էր եկել, և թիչ էր մնում երկաթուղու գիծը ծածկէր: Ոգևորուած պառաւ օրիորդը թևերը բարձրացրեց, երկու ձեռքի մէջ ամուր բռնած կարմիր փաթտոցը, որպէս զի որչափ հնար էր հեռու չպրտէր ջրի մէջ զարհուրելի մեքենան:

Ձեռքեր բարձրացնելն ու իւր յետևը մի անորոշ թպրտոց լսելը մէկ եղաւ, — անիշխանականը զարթնել էր:

Կայծակի արագութեամբ միսս Միլլին բոլոր ուժով ջրի մէջ չպրտեց կարմիր կապոցը: Զուրը պատռուեցաւ, բազմաթիւ ցայտումներ այս ու այն կողմը ցրուեցան, կարմիր փաթտոցը կուլ գնաց: Ապա յաղթական դէմքով միսս Միլլին դարձաւ դէպի մարդուկը:

— Թշուառական, խելառ կին, գոռաց մարդը ամբողջ ուժով և երկու զօրեղ բազուկներով ամուր բռնելով նորա ոսկրուտ ուսերը, պինդ թափահարեց:

Միսս Միլլին ինքն իրեն բոլորովին կորցրեց։ Բայց դեռ ողևորուած այն զգացումով, թէ մի մեծ վտանգի առաջն է առել, աչքերը յառած և նահատակի դիրք առած, բացականչեց.

Թագաւորի կեանքն ազատեցի։ Ձեր ուումը ոչնչացրի։

— Իմ ուումը ոչնչացրիր... Թագաւորի կեանքն ազատեցիր... կրկնում էր մարդուկը, կարծես հասկանալու չէր, թէ ինչ էր ուզում ասել այդ կինը։ Յետոյ վճռական շեշտով աւելացրեց.

— Շատ լաւ, այժմ բանն ինձ ու բեղ մնաց։ Ոտու ձեռքդ հաւաքիր...

Պառաւ օրիորդի համար չափազանց էր այս բոլոր արագ կատարուող յուզման ու ցնցման ազդեցութիւնը. նա այլ ևս ոչ ոյժ ունէր, ոչ հոգեկան արիւթթիւն. կատարեալ փալաս էր դարձել. զգում էր, որ կատարելապէս ենթակայ էր անիշխանականի բոլոր հրամաններին, որի անթարթ հայեացքը դիւթել էր իրեն,— այսուհետեւ նորա հրամանների դերին էր։


Եւ յերաւի մարդուկը սարսափելի էր։ Նա, որ պէտք է երկիւղ կրէր, թէ կարող էր ճանաչուիլ, բռնուիլ, առանց վարանելու վազեց ազդարար զանգակին և բոլոր ուժով լծակը քաշեց։

Գնացքը իսկոյն կանգնեց։ Աւագ-կառավարը շտապով կանգնեց դռան առաջ և հարցրեց թէ ինչ է պատահել։

— Կինս լաւ չի զգում իրեն, ասաց մարդուկը, ցոյց տալով միսս Միլլին։ Այլ ևս մնալ չի կարող այս դնացքի մէջ, առանց կեանքը վտանգի ենթարկելու։ Խնդրում եմ իջեցնէք մեզ...

Տէր Աստուած։ Միսս Միլլին ամուսնացած... Այն էլ ում հետ,— այդ անիշխանականի։ Ֆեւհ...

Կառավարը հակառակելու ոչինչ չունէր, բայց և այնպէս պարտք համարեց ասել, որ հետեւեալ կայարանը հեռու չէ և այնտեղ կարելի էր բժշկական օգնու-



ՄԱ-1218

Թիւն գտնելու Մարդուկը յամառեց, իւր կնոջ կեանքն աւելի թանգ գնահատելով: Գնացքի ծառան վերցրեց նորա ճամբրուկն ու հովանոցը, միսս Միլլիի պայուսակը, շան-կողովն ու հովանոցը և ցած տարաւ, իսկ անիշխանականը վրայ պրծաւ, իւր թեւերի մէջ առաւ անգլուհուն, որ ամօթից ու երկիւղից կիսամեռ վիճակի մէջ էր և ցած թռաւ:

Բնական է, որ կէս-ճանապարհին կանգնող գնացքի բոլոր ճանապարհորդները հետաքրքրուած, ոմանք սանդուխտների վրայ, ոմանք գլուխները դռներից ու լուսամուտներից հանած հարցնում էին գնացքի կանգնելու պատճառը: Եւ երբ իմացան, որ վտանգ չի սպառնում նոցանից և ոչ մէկի կեանքին, այլ մի անգլուհի հիւանդացել և իւր ամուսնուհետ իջնում է, ամենքն էլ նորից իրենց բաժինները դարձան, շատ սովորական բան համարելով այդ միջնադէպը:

Գնացքը շարժուեցաւ: Անիշխանականը միսս Միլլին գետին էր դրել, ինքն էլ հանգիստ մօտը կանգնել:

Այս բոլորն այնքան արագ կատարուեցաւ, որ ժամանակ իսկ չունեցայ միջամտելու մասին մտածել: Անշուշտ խիստ հետաքրքրական էր իմանալ, թէ ինչով վերջացաւ նոցա «հաշիւը»: Բայց գնացքն արդէն սլանում էր: Երկաթագիծը բաւական կոր շրջան էր կատարում, այնպէս որ գլուխս հանած դեռ երկար գիտում էի անգլուհուն և նորա անիշխանականին: Վերջինս հանգիստ նստել էր, այս անգամ ազատ կերպով ծխելով իւր ծխախոտը, իսկ խեղճ, անօգնական միսս Միլլին իւր երկար, բարակ ձող-հասակն առած կանգնել էր գծի մէջ տեղը:

Մի վերջին անգամ էլ երեւաց պառաւ օրիորդի ուրուագիծը, տափակ յարդէ գլխարկը և ամեն ինչ վերջացաւ:

Այժմ մենակ էի, շատ կցանկայի փափագած միայնութիւնս դեռ շարունակուէր,—իմանալու այդ միջնադէպի վերջը, բայց ուշ էր:

Ժամը 13, 40 ր. Բրիւսէլ էի:

—

Նոր քաղաքը բոլորովին մոռացնել էր տուել այդ դէպքը: Ճանապարհորդի անկշտում հետաքրքրութեամբ ամբողջապէս տարուել էի մուղէութեան, տաճարների, ցուցահանդէսների, գլխաւոր շէնքերի դիտելով, ամենեւին ուշադրութիւն չդարձնելով սչ յոգնածութեան, ոչ էլ եղանակի:

Անցել էր մօտ երկու շաբաթ, բայց ամեն օր էլ մի նոր բան էր դառնում մոռացուած, որ պէտք էր այցելել:

Մայիսի սկզբներն էր, այդ գեղեցիկ ամիսը, որ շատ նման է գեղեցիկ կնոջ՝ իւր անվերջ քմահաճոյքներով, որ երբեմն իւր սառն անտարբերութեամբ ձեզ սառցնում և երբեմն իւր զգլխիչ հրապոյրներով ու ջերմութեամբ այրում է: Այդպէս էլ այդ ամիսն էր, երբեմն այնպէս ցուրտ օրեր էր անում, որ սառչում էիր, երբեմն էլ այնքան շոգ, որ ակամայ մի զով տեղ էիր որոնում մի փոքր ազատ շունչ քաշելու, հովանալու:

Ասացի, որ նոր քաղաքը բոլորովին մոռացնել էր տուել այդ դէպքը: Մի օր անցնում էի Ստորին քաղաքի ամենաբանուկ ճեմելիքներից մէկով, որ Անսպախ քաղաքապետի անունն է կրում: Շոգից պէտք էր մի փոքր պատսպարուել: Մտայ մօտիկ սրճարաններից մէկը, թէ գեղեցիկ երաժշտութիւն լսելու և թէ մի բաժակ դարե՛ջուր առնելու: Սրճարանը լիքն էր ամենընտիր հասարակութեամբ. ամենքն ուրախ, ժպտուն, վառ դէմքերով: Ժխոր, աղմուկ, ծիծաղ: Համարեա բոլոր նստաբանները բռնուած էին: Երկար աչք ածելուց յետոյ վերջապէս մի անկիւնում մի սեղան նշմարեցի, որի մօտ միայն մի հոգի էր նստած: Դիմեցի, թոյլտուութիւն խնդրելով նստողից, ես էլ միւս աթոռը դրաւեցի: Սպասաւորը երկու րոպէից մի բաժակ սառը, պատուական Միւնխենի դարե՛ջուր դրեց առաջս:

Հենց այն է, ուզում էի ձեռքս դարե՛ջրիս գաւաթին տանել, որ մի նոր հանգամանք ուշադրութիւնս գրաւեց:

Ինչ էք կարծում, ո՞վ էր մօտս նստողը:

Մեր մարդուկը, միսս Միլլիի զարհուրելի անիշխանակներ:

Գարեջուրս մոռացայ: Այժմ հնարք էի որոնում, թէ ինչ եղանակով հետաքրքրութիւնս գոհացնեմ: Մտածեցի, որ ամենից լաւը ուղղակի դիմելն է: Ուղիղ գիծն ամենից շուտ է նպատակի տանում, երբեմն:

Մի ումպ արեցի, աշխատելով դորանով մի փոքր հոգեկան հանգստութիւն ստանալ:

— Ներեցէք, պարոն... դիմեցի հարեւանիս:

Մարդը գլուխը բարձրացրեց և զարմացած ինձ նայեց:

— Ձէք ճանաչում:

— Ո՛չ, պարոն, պատիւ չունիմ ձեզ ճանաչելու:

Իրաւունք ունէ՛ր: Գուցէ այդ միջադէպի ժամանակ ամենեւին ինձ չէր էլ նկատել:

— Ինչո՞վ վերջացաւ, պարոն, միսս Միլլիի՝ անգլուհու դէպքը:

Մարդու զարմացած դէմքն աւելի ևս յետ գնաց:

— Դուք ինչ գիտէք, ասաց այս անգամ աւելի մեղմ ձայնով:

— Ձէ որ մենք միասին էինք, նոյն բաժնում, երբ ձեր կարմիր կապոցը ջուրը նետուելուց յետոյ, անգլուհուն գրկած դուրս թռաք գնացքից:

Հարեանս մի քիչ կանգ առաւ, գլուխը քորեց և նոյն մեղմ ձայնով ասաց:

— Բայց ես ձեզ չեմ նկատել... Մենակ չէ՛ի՛նք անգլուհու հետ:

— Ինչպէս տեսնում էք, — ոչ, երեքով էինք: Իսկ որովհետեւ երեքիցս երկուսը գիտեն միջադէպի ելքը, բարի չէ՛ի՛ք լինի, երրորդին էլ հաղորդելու:

Առանց խօսք ասելու, սրտանց, մի կուշտ ծիծաղեց

բարակ զիլ ձայնով, յետոյ ծառային կանչեց մի նոր
գաւաթ գարեջուր էլ ապսպրեց և յետոյ աւելացրեց.

— Ինչո՞ւ չէ, եթէ այդչափ հետաքրքիր էք:

Երբէք չէի կարող կարծել, որ այդ հասարակ, ան-
հրապոյր դէմքով, «գարհուրելի անիշխանականը» կարող
է այդքան մեղմ ձայն և ծիծաղ ունենալ: Է՛, աշխար-
հումս ինչ չի պատահում:

Համաձայնութիւնս տուի. աթոռս աւելի մօտ քա-
շեցի.

— Լաւ, ինչու չէ, կպատմեմ: 25ք շտապում:

— Ոչ:

— Ես էլ շտապելու բան չունիմ, Հով տեղ է,
լաւ հասարակութիւն, դեղեցիկ երաժշտութիւն և
հետաքրքրուող հարեան. Զեր մեկնելուց յետոյ,
այսինքն գնացք մեկնելուց յետոյ նա հանգիստ նստեց
մօտիկ բարի վրայ, գրպանից հանեց ծխախոտը, սկսեց
ծխել, իսկ խեղճ անգլուհին ինքն իրեն բոլորովին կորց-
րած կանգնած էր ճանապարհի մէջ տեղը: Փոքրիկ շնիկն
իզուր էր աշխատում իւր տիրուհու ուշադրութիւնը գը-
րաւել, տիրուհին ամբողջապէս նորա ազդեցութեան
տակ էր գտնուում:

— Բայց ո՞վ է այդ ճնառն. չէ՞ որ երկուսով իջաք
միայն, հարցրի զարմացած:

— Ճնառն... ես եմ:

— Ուրեմն ինչո՞ւ երրորդ դէմքով էք պատմում:

— Որովհետեւ այդ անողը ես չէի, այլ մի երրորդ
անձն, որ այդ րոպէին մէջս նստած ինձ հրամաններ էր
տալիս: Ի բնէ հանգիստ մարդ, ուրիշների գործին չը
խառնուող և անախորժութիւններից խուսափող,— չէի
կարող կարծել, որ մի օր, այն էլ կեանքիս ամենանշա-
նաւոր օրը կարող էի մի օտար կին գրկել և նորա հետ
գնացքից դուրս թռչել: Այդ անողը նա էր, ես չէի:
Այդպէս էլ կպատմեմ:

Եւ շարունակեց:

«... Անդուհին կանգնած էր ճանապարհի մէջ տեղը՝
«Այժմ, առաջ նա, դաժան ձայնով, որովհետեւ դուք
էք ջուրը նետել... իմ ումբս, ուստի դուք էլ կորոնէք
և կգտնէք»

Միսս Միլլիի մտքովն իսկ չէր անցնում հակառակու-
թեան կամ անհամաձայնութեան ցոյց անել։

— Ի՞նչ պիտի անեմ, հառաչեց նա։

— Ի՞նչ պիտի անէ՞ք։ Զարմանալի հարցեր տալ գի-
տէք։ Իսկ որովհետեւ հարցնում էք, ուստի կասեմ, թէ
ինչ պիտի անենք։ ԾՈՒ կծխեմ իմ ծխախոտը։ Իսկ ղուք
կմտնէք ջուրը և կորոնէք ումբս։ Դուք կհանէք ձեր
կօշիկները և գուլպաները, կմտնէք ջուրը, տակն ու վրայ
կանէք այնքան, մինչև որ կգտնէք։ Վամենաք կարող էք
ձեր արդուզարդի որեւէ մասն էլ հանել, այդ էլ ձեզ-
նից է կախուած, ես գործ չունիմ։

Այս անգամ միսս Միլլին արդար զայրոյթ զգաց։
Այդ արդէն չափազանց էր։

Միսս Միլլին աւելի շուտ կմեռնէր, բան իւր կօ-
շիկներն ու գուլպաները կհանէր մի օտար մարդու ա-
ռաջ։ Ո՛չ, այդպիսի պահանջ կատարել չի կարող։ Իսկ
վերջին առաջարկը նա լսել անգամ չուզեց։ Համեստու-
թիւնը, որ միսս Միլլի ամենամեծ առաքինութիւնն էր
եղել, դրականապէս արգելում էր այդ արարքը։ Նոյն
իսկ այն ժամանակ, երբ նա փոքրիկ աղջիկ էր, այդ ժա-
մանակն էլ այդպիսի անհամեստութիւն չի արել։ Ոչ մի
վկայ գտնել չէր կարելի։ Ֆիդօն անգամ այնքան
անհամեստ չի լինի, որ այդպիսի վկայութիւն տար։ Ո՛չ,
աշխարհիս վրայ ոչ մի բան չի կարող իրեն ստիպել այդ
թշուառականի անհամեստ հրամանը կատարել տալու։

Ուստի միսս Միլլին առանց երկար մտածելու, ջու-
րը մտաւ կօշիկներով և այնպէս ինչպէս կար։

Ջուրը սառն էր. սարսափելի սառւ։ Միսս Միլլին
զգաց թէ ինչպէս այդ անախօրժ սառնութիւնը սկիզբը
անցաւ կօշիկների մէջ, յետոյ անցաւ նրբանի տակը,

հասաւ մատներին։ Բայց աւելի անտանելի էր այդ զգացումը, երբ միսս Միլլին հետզհետէ առաջանալով այդ անտանելի սառնութիւնը կամաց-կամաց բտրձրանում էր և հասաւ մինչև գոտկատեղը։

Մի րոպէ մտածեց դուրս թռչել այդ անհաճոյ լուգարանից, բայց դաժան թշուառականի շեշտակի հայեացքը յետ պահեց նորան այդ մտադրութիւնից։

Ինչքան ժամանակ մնաց ջրի մէջ՝ անդադար յետ առ առաջ գնալով և իւր ակնոցների միջից գննելով չաւրաբաստիկ կարմիր թաշկինակի հետքը։ Միսս Միլլին կարծում էր, որ դարեր պիտի անցած լինէին։ Եւ մինչ խեղճ պառաւ օրիորդը չափափում էր սառը ջրի մէջ, նորա անտանելի հալածողը հանգիստ նստած իւր քարի վրայ, իւր ծխախոտն էր ծխում ամբողջ կրծքով։

— Պարոն, գոռաց միսս Միլլին, գտայ... կուղենաք գալ, վերցնել ձեր... կապոցը։

— Ինքներդ առէք և բերէք, լսուեցաւ դահճի դաժան հրամանը։

Ուրեմն, այդ էլ պէտք է կատարէր։ Միսս Միլլին կուացաւ, թեւերը մինչև ուսերը կոխեց սառը ջրի մէջ, բռնեց կարմիր կապոցի հանգոյցի մի ծայրից, ցրտից և երկիւղից փայտ կտրած, շնդող տալով, ափն ելաւ, աշխատելով վերջին ոյժերը հաւաքելու, որ իւր անձնական պատուասիրութեան զգացումը պահպանած լինէր։ Նոյն իսկ այդ դրութեամբ անգլուհու սնափառութիւնը և կեցուածքը չէր ուզում կոտրուել։

Մարդը վեր ցատկեց տեղից, խլեց անգլուհու ձեռքից կապոցը, մի վերջին հայեացք նետեց նորա դէմքին, մի կուշտ ծիծաղեց և փախաւ, որքան ոտքերումն ոյժ կար։

Միսս Միլլին գլուխը կորցրած, աչքերը յառած, սառոյց կտրած, դեռ չէր կարողանում իրեն հաշիւ տալ, թէ ինչ հրաշքով դեռ ևս կենդանի է մնացել ինքը։

Յետոյ, երբ մի փոքր անցաւ և զգաց, որ բոլոր

վտանգն անցել էր, որ այլ ևս վախենալու տեղիք չունէր, քիչ հոգի առաւ Բայց հէնց նոյն րոպէին մի նոր միտք կայծակի արագութեամբ անցաւ նորա մտքով:

Այդ զարհուրելի ոճիրը, որի առաջն առնել էր կամեցել ինքը, այդ ոճիրը դարձեալ կկատարուի: Անիշխանականը փախաւ: Նա անշուշտ կապանէ թագաւորին... եթէ մէկը չաշխատի դորա առաջն առնել:

Միսս Միլլին որոշեց,—պէտք էր ամեն հնարք գործ դնել անիշխանականից առաջ հասնել:

Վերջին ոյժերը ժողովելով, ինքն էլ ճանապարհ ընկաւ: Առաջին կայարանում պատահած առաջին գնացքը մտաւ շտապով, որ Սպա էր գնում: Նա ամենեւին ուշադրութիւն չէր դարձնում իւր արտաքինի վրայ. նոր միտքը ամբողջապէս կլանել էր նորան:

Հազիւ կայարան հասաւ գնացքը և միսս Միլլին գետին ցատկեց, առաջին հարցն այն էր—«թագաւորը, ո՞ր է թագաւորը»: Պատասխանեցին, որ թագաւորը յիւրաւի հասել է, բայց դժուար թէ իրեն յաջողուի տեսնել նորան: Եւ այդ ասելու ժամանակ պատասխանող աստիճանաւորը բաւական համոզիչ հայեացք ձգեց նորա արտաքինի վրայ:

Կայարանի դահլիճում, որ արքայական այցի պատճառով ընդունելութեան սրահի էր վերածած, թագաւորն ընդունում էր բազմի ներկայացուցիչներին և նուցա, որոնք իրաւունք ունէին այդպիսի դէպքերում ներկայանալու թագապսակ անձանց, Բացի այդ ներկայացուցիչներից և մի քանի անձինքներից, որոնք յատկապէս իրաւունք էին ստացել ներկայ լինելու ընդունելութեան հանդիսին, մնացած հասարակութեան համար մուտքը խիստ արգելուած էր: Դռների առաջ և ամբողջ կայարանի երկարութեամբ կանգնած էին երկշարք զինուորներ և ըստմութիւ զինայրեր:

Կիտուած ամբոխը կարող էր միայն հեռուից դիտել նախապէս սահմանած ընդունելութեան կարգը և

շատ շատ իւր ներկայութիւնը յայտնել սովորական դարձած կեցցէնների բացականչութեամբ:

Հեշտ է ասել թէ ներկայութիւնը յայտնել սովորական բացականչութիւններով և բաւականանալ դորանով, այն ինչ իւրաքանչիւր կորցրած ըողակէ կարող էր թագաւորի կեանքի վերջին ըողակն լինել...

Առանց ուշադրութիւն դարձնելու քաշկռտութենքին, բարձրացած աղմուկին, հրացանի կոթի հարուածներին և տեղացող կռուիներին, միսս Միլլին ճեղքեց, անցաւ ամբոխը, ղինուորների շարքը, ղինայրների շրջթան, մտաւ ընդունելութեան սրահը, որտեղ շարէշար անցնում էին ընդունելութեան արժանացած պատուակախները, մէջ տեղից լայն ճանապարհ թողնելով մինչև արքայական գահոյքի պատուանդանը:

Երևակայեցէք յաղթական անգլուհու զարմանքի չափը, երբ այդ լայն ճանապարհի վրայ փռուած գորգի ծայրին, թագաւորի առաջ չոքած տեսաւ... նորան: Օ՛, այդ սուտ ճգնաւորին, չոքած մարդուն ինքը շատ լաւ է ճանաչում, հազար մարդու մէջ կճանաչէր: Նա էր, նա... Իւր դահլճը: Նոյն մաղձոտ կերպարանքը, միւսնոյն թանձր, սև միրուքը: Նոյն հայեացքը: Մի վերջին հանգամանք էլ բոլորովին չքացրեց ամեն կասկած անգլուհու համար,—գրպանի միջից դուրս պրծած կարմիր թաշկինակի ծայրը մատնում էր տիրոջը:

Միսս Միլլին ճիշտ ժամանակին էր հասնում:

Թրջուած հաւ կտրած անգլուհին հպարտ-հպարտ առաջ անցաւ, ձեռքը դէպի մարդուն մեկնեց սպառնական շեշտով և խրոխտ ձայնով կանչեց.

—Բռնեցէք այդ մարդուն, անիշխանական է նա:

Ի մեծ զարմանս միսս Միլլիի, այդ խօսքերը ոչ միայն ցանկալի ազդեցութիւնը չարին, ոչ մի շփոթութիւն չառաջացրին, այլ նոյն իսկ մի ընդհանուր զսպուած փութկոց պատճառեցին: Մարդը գլուխը դարձրեց դէպի անգլուհին: Վերջինս նորա խօսքերից միայն այս լսեց. «Այժմ,

Տէր արքայ, ահա և այն խենթ պառաւր, որի մասին քիչ առաջ պատիւ ունեցայ ձեզ պատմելու։ Ահա, սա է, որ ջուրը նետեց Ձերդ Մեծութեան համար պատարաստած ժամացոյցը։ Բայց վարպետն այնքան ճարտարութեամբ է շինել, որ ոչ այդ ցնցումները, ոչ անսպասելի լողացումը չեն կարողացել փնասել նորան...»։

Եւ յետոյ սկսեց սքանչացած թագաւորի առաջ մէկ մէկ ցոյց տալ ժամացոյցի բոլոր մեքենաների նուրբ և նորահնար կազմը, որի ճարտար հետադոյն էր ինքը։ Անշուշտ այդպիսի իրը իրաւունք ունէր նա խնամքով փաթըտելու և նոյնչափ էլ խնամքով տանելու և որը պատճառ էր դարձել միսս Միլլիի համար այդքան ծայրահեղ ենթադրութիւններ անելու։

ԿԶԻՐ

Բրիւսել
905 V 14/17